02 Շաբաթաթերթ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

27 (1426) • 26 հուլիսի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Ոստիկանության կոլեգիայի նիստը

Հուլիսի 19-ին տեղի ունեցավ ոստիկանության ընդլայնված կոլեգիայի նիստը, որի ընթացքում ամփոփվեցին ոստիկանության ծառայությունների եւ տարածքային մարմինների 2019 թվականի առաջին կիսամյակի օպերատիվ-ծառայողական գործունեության արդյունքները:

Նիստը վարում էր ոստիկանության պետ, ոստիկանության գեներալ-մայոր Վալերիյ Օսիպյանը:

Մասնակցում էին ոստիկանության կոլեգիայի անդամներ, կենտրոնական ապարատի, մարզային եւ տարածքային ստորաբաժանումների ղեկավարներ:

Ցեկույցներով հանդես եկան ոստիկանության պետի առաջին տեղակալ Արման Սարգսյանը, ոստիկանության պետի տեղակալ Վարդան Մովսիսյանը, շտաբի պետ Արմեն Ղուկասյանը եւ կադրային քաղաքականության վարչության պետ Սամվել Քոչարյանը:

Նշվեց, որ 2019 թ. առաջին կիսամյակի ընթացքում ոստիկանությունը, ընդհանուր առմամբ, կատարել է իր առջեւ դրված խնդիրները, օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում վերահսկել է օպերատիվ իրավիճակը՝ պահպանելով կայուն հասարակական կարգն ու անվտանգությունը:

Ըստ վիճակագրական տվյալների՝ կիսամյակի ընթացքում գրանցված հանցագործությունների ընդհանուր թվաքանակն աճել է 9,0%-ով, ինչը գլխավորապես պայմանավորված է գողությունների, հատկապես՝ ոչ մեծ ծանրության գողությունների թվի աճով, ինչպես եւ ճանապարհային երթեւեկության կանոնները խախտելու դեպքերի ավելացմամբ:

Չնայած հանցագործությունների թվի որոշակի աճին՝ 2019 թ. առաջին կիսամյակում իրականացված լայնածավալ օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումների արդյունքում շուրջ չորս անգամ կրճատվել է դրա տեմպը (2019 թ. հունվար՝ 35,3%, հունիս՝ 9,0%):

Դեպքերի աճը պայմանավորված է նաեւ այն հանգամանքով, որ դեռեւս նախորդ տարվանից, կապված իրավիճակի փոփոխության հետ, բարձրացել է քաղաքացիների վստահությունը ոստիկանության գործունեության նկատմամբ, եւ նրանք չեն խուսափում դիմել ոստիկանություն. եթե 2018 թ. 6 ամիսներին ոստիկանության ստորաբաժանումներ ստացվել է 93 874 առերեւույթ հանցագործության մասին հաղորդում, ապա 2019 թ. 6 ամիսների ընթացքում դրանց թիվն աճել է 16,2%-ով՝ կազմելով 109 087: Ի դեպ, 18,1%-ով աճել են այն դեպքերը, երբ քաղաքացիները դիմել են ոստիկանություն՝ նախկինում իրենց կողմից չհայտնած դեպքերի վերաբերյալ:

էջ 2

Հանդիպում լրագրողների հետ

Հուլիսի 24-ին տեղի ունեցավ ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանի մամուլի ասուլիսը, որի ընթացքում ամփոփվեցին ոստիկանության օպերատիվ ծառայողական գործունեության 2019 թ. առաջին կիսամյակի արդյունքները:

Մասնակցում էին ոստիկանության շտաբի պետ Արմեն Ղուկասյանն ու հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչության պետ Աշոտ Ահարոնյանը:

Արմեն Ղուկասյանը ներկայացրեց 2019 թվականի առաջին վեց ամիսներին հանրապետությունում գրանցված հանցագործությունների շարժընթացն ու ոստիկանության աշխատանքը:

Ընդգծվեց, որ չնայած հանցագործությունների թվի որոշակի աճին, լայնածավալ օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումների արդյունքում շուրջ չորս անգամ կրճատվել է դրա տեմպը: Միեւնույն ժամանակ, դրական է բացահայտումների դինամիկան. հանցավորության դեմ պայքարում ոստիկանության ղեկավարության կողմից ընտրված մարտավարության եւ օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ բացահայտման աշխատանքներում արձանագրվել է կայուն աճի տեմպ:

Ոստիկանության շտաբի պետի հաշվետվությունից հետո Վալերիյ Օսիպյանը պատասխանեց լրագրողների հարցերին, որոնք հիմնականում վերաբերում էին հաշվետու ժամանակահատվածում տեղի ունեցած առանձնապես ծանր եւ հասարակական հնչողություն ստացած հանցագործությունների բացահայտմանը, ճանապարհատրանսպորտային պատահարներին եւ ճանապարհային ոստիկանության ծառայությանը, վերջերս Իջեւանում տեղի ունեցած դեպքերին, ապօրինի ծառահատումներին եւ ոստիկանության գործունեությանը վերաբերող այլ խնդիրների:

Ապօրինություններ «Սեւան» ազգային պարկում

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչությունում օպերատիվ տեղեկություններ էին ստացվել Գեղարքունիքի մարզում կատարված ապօրինությունների վերաբերյալ:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվեց հետեւյալը: 2013 թվականին բնապահպանության նախարարության բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակի եւ «Ճամբարակի ճանապարհաշինարարական շահագործման ձեռնարկություն» բաց բաժնետիրական ընկերության միջեւ պայմանագիր էր կնքվել, որի համաձայն՝ ընկերությունը 2013-2015 թթ. ընթացքում պետք է 368 միլիոն 776 հազար դրամով «Սեւան» ազգային պարկի Վարդենիսի, Նորատուսի եւ Մարտունու մասնաճյուղերի ափամերձ եւ ջրածածկ հատվածներում՝ ընդհանուր 285 հեկտար մակերեսով, անտառամաքրման աշխատանքներ իրականացներ:

էջ 3

Միջադեպ՝ մահվան ելքով

Հուլիսի 19-ին, ժամը 3.45-ին, ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնում ահազանգ ստացվեց. Նոր Արեշի 16-րդ փողոցի տներից մեկում դանակահարություն էր եղել:

Դեպքի վայր մեկնեց ոստիկանության էրեբունու բաժնի օպերատիվ խումբը:

Քիչ անց հիվանդանոցից հաղորդեցին, որ «շտապօգնության» խումբը բուժօգնության է տեղափոխել նշված հասցեի բնակիչ 59-ամյա տղամարդու եւ 61-ամյա կնոջ՝ երկուսն էլ՝ կրծքավանդակի կտրած-ծակած վերքերով:

Կնոջ վնասվածքները համատեղելի չէին կյանքի հետ. նա մահացել էր:

էջ 7

ՀՀ ոստիկանությունը հայտարարում է ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի բակալավրիատի եւ քոլեջի 2019/2020 ուսումնական պետապատվերի շրջանակներում ընդունելություն

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիան իրականացնում է «Իրավագիտության բակալավր» որակավորմամբ առկա ուսուցման ձեւով ուսուցում: Ուսման տեւողությունը 4 տարի է:

Կրթահամալիրի քոլեջն իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագրով «Ոստիկանության սպա» որակավորմամբ առկա ուսուցման ձեւով ուսուցում: Ուսման տեւողությունը 2 տարի է:

Ընդունելության կարգին եւ պայմաններին կարող եք ծանոթանալ ոստիկանության www.police.am կամ կրթահամալիրի www.edupolice.am կայքերում:

«Վիրտուալ» հարաբերություններ

Համացանցային ծանոթը սպառնացել էր, որ լուսանկարը կտարածի կայքերում, եթե չվճարի պահանջված փողը:

էջ 3

Դալին, վիրաբույժը, մարդասպանը...

Գազանային հաշվեհարդար էր տեսնում աղջիկների հետ հատկապես երկաթուղային կայարանի մերձակայքում:

էջ 5

Պատիժ՝ երեք տարի անց

Անսպասելի հարվածներից ընկավ եւ կորցրեց գիտակցությունը. գլխով հարվածել էր աստիճանին:

էջ 7

Համակարգ

Ոստիկանության կոլեգիայի նիստը

Սկիզբը՝ էջ 1

Հաշվետու շրջանում նվազել են դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու, այդ թվում՝ ծանր վնաս պատճառելու, սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված, յուրացման կամ վատնման, կողոպուտի դեպքերը:

Ոստիկանության մարմինների ձեռնարկած միջոցառումների արդյունքում առգրավվել եւ բացատրական աշխատանքների շնորհիվ կամավոր հանձնվել է 320 միավոր հրազեն:

Զեկուցողը նկատեց, որ Ազգային ժողովի կողմից հայտարարված համաներման կապակցությամբ՝ 2018թ. նոյեմբերի 6-ից մինչեւ 2019 թ. հուլիսի 1-ն ազատ է արձակվել 650 անձ: Նրանցից 88-ը հայտնաբերվել են կրկին անգամ հանցագործություն կատարելու համար. կատարել են 178 նոր հանցագործություններ, որոնցից 1-ը՝ սպանության, 1-ը՝ սպանության փորձի, 2-ը՝ սպանության սպառնալիքի, 3-ը՝ ավազակության, 2-ը՝ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 118-ը՝ գողության, 10-ը՝ առանց իրացնելու նպատակի՝ թմրամիջոց պահելու, 2-ը՝ կողոպուտի, 4-ը՝ խարդախության, 14-ը՝ ծեծի եւ այլ դեպքեր են:

Հանցավորության դեմ պայքարում ոստիկանության ղեկավարության կողմից ընտրված մարտավարության եւ իրականացված լայնածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում բացահայտման աշխատանքներում արձանագրվել է կայուն աճի տեմպ (հունվարին այն կազմել է 43,0%, փետրվարին՝ 44,6%, մարտին՝ 52,1%, ապրիլին 52,5%, մայիսին՝ 54,9%, հունիս ամսին՝ 60,1%):

Ըստ հիմնական հանցատեսակների՝ բացահայտման աշխատանքների արդյունավետության պատկերը հետեւյալն է. սպանություններով՝ 73,9%, սպանության փորձերով՝ 78,1%, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու դեպքերով՝ 86,3%, այդ թվում՝ ծանր՝ 80,2%, բռնաբարության եւ բռնաբարության փորձի՝ 66,7%, ճանապարհային երթեւեկության կանոնների խախտման՝ 81,5%, այդ թվում՝ մահվան ելքով՝ 66,7%, խուլիգանության՝ 59,3%, այդ թվում՝ զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ՝ 71,2%, ավազակության՝ 87,7%, կողոպուտի՝ 63,5%, գողության՝ 45,5%, այդ թվում՝ բնակարանային՝ 24,4%, խարդախության՝ 61,5%, յուրացման կամ վատնման՝ 58,3% եւ տրանսպորտային միջոց փախցնելու դեպքերով՝ 78,8%:

2019 թ. 1-ին կիսամյակում կոռուպցիոն բնույթի հանցագործություններով հարուցված քրեական գործերով բացահայտվել է պետությանը, կազմակերպություններին եւ անձանց հասցված շուրջ 11 մլրդ 170.4 մլն դրամի, 6.1 մլն դոլարի եւ 3.200 եվրոյի վնաս: Վերականգնվել է շուրջ 237 մլն դրամի գումար:

Ոստիկանության ստորաբաժանումները պատշաճ հասարակական կարգ ու անվտանգություն են ապահովել հանրապետությունում անցկացված 2.379 զանգվածային միջոցառումների, մասնավորապես՝ փետրվարի 17-ին եւ հունիսի 10-ին՝ հանրապետության մի շարք մարզերում կայացած համայնքի ղեկավարի եւ ավագանու անդամների ընտրությունների ընթացքում:

Բնակչության շրջանում ոստիկանության նկատմամբ վստահության բարձրացման առումով ոստիկանության ղեկավարությունը խիստ կարեւորում է նաեւ յուրաքանչյուր ծառայողի կողմից օրինականության պահպանման խնդիրը: 2019 թ. 1-ին կիսամյակի ընթացքում ոստիկանության ծառայողների նկատմամբ կատարվել է 920 ծառայողական քննություն. կարգապահական տույժի է ենթարկվել 503 ծառայող:

Զգալի աշխատանքներ են իրականացվել անձնակազմի կարգապահության բարձրացման եւ բարեփոխումների իրականացման ուղղությամբ, ձեռնարկվել են կազմակերպահրավական բնույթի միջոցառումներ՝ համակարգն արդի պահանջներին համապատասխանեցնելու, օպտիմալացման, ոստիկանությանն առնչվող իրավական դաշտի կատարելագործման, ոստիկանության աշխատանքը հանրությանը թափանցիկ ներկայացնելու, միջազգային ոստիկանական եւ այլ կառույցների հետ փոխհամագործակցությունն ակտիվացնելու ուղղությամբ:

Ամփոփելով կոլեգիայի նիստը՝ ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանն անդրադարձավ հաշվետու զեկույցներում ներկայացված վիճակագրությանն ու բարձրացված խնդիրներին: Ընդհանուր առմամբ դրական գնահատելով կիսամյա աշխատանքի արդյունքները՝ նա հույս հայտնեց, որ ոստիկանության ծառայություններն ու տարածքային մարմինները կշարունակեն հետեւողական աշխատանքը, եւ կոնկրետ հանձնարարականներ տվեց ոստիկանության առջեւ դրված խնդիրների պատշաճ իրականացման, հանցավորության դեմ պայքարն առավել արդյունավետ կազմակերպելու, կատարողական եւ ծառայողական կարգապահությունն ամրապնդելու ուղղությամբ:

Հեռախուզվում էր սպանության համար

Հուլիսի 15-ին ոստիկանության Մաշտոցի բաժնում հիվանդանոցից հաղորդում էր ստացվել, որ կրծքավանդակին դանակահարված վերքերով բուժօգնության է տեղափոխվել 30-ին մոտ մի տղամարդ:

Հիվանդանոց մեկնած օպերատիվ խումբը պարզեց տուժածի ինքնությունը: Ըստ բժշկի տեղեկանքի՝ նա ի վիճակի չի եղել բացատրություն տալու: Ցավոք, ստացած վնասվածքը կյանքի հետ համատեղելի չէր, եւ տղամարդը, գիտակցության չգալով, մահացավ:

Փաստի առթիվ հարուցվեց քրեական գործ:

Մաշտոցի ոստիկանների ձեռնարկած միջոցառումներով ճշտվեցին դեպքի վայրը եւ կատարվածի հանգամանքները: Պարզվեց դանակահարողի ինքնությունը:

Քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ բացատրական աշխատանքի արդյունքում հուլիսի 20-ին 41-ամյա կասկածյալը ներկայացավ ոստիկանության Մաշտոցի բաժին եւ կալանավորվեց:

Քննությունը շարունակվում է:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

Նախկին համայնքապետի ապօրինությունները

Ազգային անվտանգության ծառայությունից ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչություն օպերատիվ տվյալներ էին ստացվել Գեղարքունիքի մարզի Չկալովկա համայնքի նախկին ղեկավարի ապօրինությունների վերաբերյալ:

Տեղեկությունների հիման վրա ԿՀԴՊ գլխավոր վարչության ծառայողները, համագործակցելով ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության եւ Գավառի բաժնի ծառայողների հետ, ձեռնարկեցին օպերատիվ-հետախուզական ծավալուն միջոցառումներ:

Նախնական տվյալներով՝ համայնքի նախկին ղեկավարը անապահով ընտանիքներին դրամական օգնություն տրամադրելու պատրվակով՝ 2014-2016 թթ. համայնքի բյուջեից գումարներ է դուրս գրել, որոնցից 1 միլիոն 170 հազար դրամը չի տրամադրել բնակիչներին եւ յուրացրել է: Բացի այդ, պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով՝ 2015 թ. ձեւական մրցույթ է հայտարարել եւ փաստացի իրեն պատկանող 7 միլիոն դրամով գնած «BMW» մակնիշի ավտոմեքենան 10 միլիոն 400 հազար դրամով վաճառել է համայնքին՝ համայնքի կարիքների համար տրանսպորտային միջոց ձեռք բերելու նպատակով: Այդ կերպ համայնքի օրինական շահերին պատճառվել է շուրջ 3 միլիոն 400 հազար դրամի վնաս:

Դեպքերի առթիվ քրեական գործ է հարուցվել:

Բռնվեց կաշառք ստանալիս

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչության, Շիրակի մարզային վարչության, Մուշի եւ Արթիկի բաժինների ծառայողները համատեղ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում կոռուպցիոն բնույթի հանցագործության վերաբերյալ օպերատիվ տվյալներ էին ստացվել:

Ըստ տեղեկությունների՝ Շիրակի մարզպետարանի սոցիալական ապահովության «Գյումրի-2» տարածքային բաժնի տեսուչներից մեկը մի կնոջ նպաստառուների ցուցակում ընդգրկելու, այնուհետեւ նպաստից չզրկելու համար 2017-2018 թթ. ընթացքում պահանջել ու ստացել էր 63 հազար դրամ: Հետագայում 2019 թ. նպաստառուների ցուցակում ընդգրկելու համար պահանջել էր երկու ամսվա նպաստի գումարը՝ 56 հազար դրամ:

Հուլիսի 22-ին ոստիկանության ծառայողներն իրականացրին օպերատիվ-հետախուզական հատուկ միջոցառում ու պահանջած փողը վերցնելու պահին բռնեցին 61-ամյա աշխատակցուհուն: Հայտնաբերվեցին «կաշառք» գրառմամբ թղթադրամները:

Աշխատակցուհին բերման է ենթարկվել ոստիկանության Մուշի բաժին:

Քրեական գործ է հարուցվել:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Օպերատիվ

Պահպանության լավագույն ծառայողը

Անցած տարվա ոստիկանության աշխատանքի արդյունքներն ամփոփելիս որոշվել են նաեւ տարբեր ծառայությունների գծով տարվա լավագույնները: 2018 թվականի պահպանության լավագույն ծառայող է ճանաչվել ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության Գյումրիի պահպանության բաժնի պահպանության ավագ տեսուչ, ոստիկանության կապիտան Քրիստինա Բոնդարեւան:

«Միշտ երազել եմ համազգեստ կրել: Հայրս եղել է զինվորական բժիշկ, մայրս ու քույրս էլ էին ծառայում զինվորական կառույցներում: Երբ տեսնում էի նրանց համազգեստով, զգում էի, որ ես էլ եմ ուզում կրել համազգեստ»,- ասում է Քրիստինա Բոնդարեւան:

Քրիստինա Բոնդարեւան ոստիկանությունում ծառայում է 2008 թվականից: Ծառայության անցնելով պետական պահպանության գլխավոր վարչությունում՝ շարքայինից հասնել է մինչեւ կապիտանի կոչման: Զբաղեցրել է տարբեր պաշտոններ՝ պահպանության վաշտի ոստիկանից մինչեւ բաժնի ավագ տեսուչ: «Միշտ մտածում էի, որ կնոջ համար համազգեստ կրելը դժվար կլինի, չի կարողանա շատ հարցեր լուծել, տարբեր խոչընդոտներ հաղթահարել, բայց հետո հասկացա՝ եթե բարեխիղճ ես ծառայում, դժվարություններն էլ են հեշտ հաղթահարվում»,- մեզ հետ զրույցում անկեղծացավ Քրիստինան:

Քրիստինա Բոնդարեւան իր բարեխիղճ ծառայությամբ ապացուցում է, որ ոչ միայն դժվար չէ լինել կին ոստիկան, այլեւ հնարավոր է լինել ծառայության մեջ լավագույնը: Ի դեպ, ստորաբաժանման ղեկավարը նույնպես գեղեցիկ սեռի ներկայացուցիչ է: Մի կարեւոր հանգամանք, որը չնշել պարզապես չենք կարող. բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Արփինե Թադեւոսյանը պահպանության լավագույն տեսուչ է ճանաչվել 2012 թվականին: «Քրիստինա Բոնդարեւան օրինակելի ծառայող է: Անցյալ տարի նա բացահայտել է նաեւ հանցագործություններ, հայտնաբերել հետախուզվողներ: Կազմակերպչական ունակությունների տեր ծառայող է, անձնակազմը սիրում եւ հարգում է նրան»,- նշեց Արփինե Թադեւոսյանը:

Քրիստինա Բոնդարեւան աշխատանքային օրվա ընթացքում լինում է բաժնի պահպանության տակ գտնվող գրեթե բոլոր կառույցներում՝ բժշկական կենտրոն, պետական ու տեղական ինքնակառավարման գերատեսչություններ, բանկեր եւ այլն: Պետական հիմնարկությունների գործառույթները տարբեր են, նույնն է պահպանության ստորաբաժանման խնդիրը՝ պահպանել տարածքի անվտանգությունն ու ապահովել բնականոն աշխատանքը:

Պարզվում է ոստիկանության Գյումրիի պահպանության բաժինը իսկապես լավագույնների բաժին է: Այստեղ է աշխատում նաեւ 2015 թվականի պահպանության լավագույն ծառայողը՝ վաշտի հրամանատար, ոստիկանության կապիտան Մհեր Չարխիֆալաբյանը. «Քրիստինայի հետ ծառայում ենք 2014 թվականից: Նա իր պարտականությունները կատարում է ճիշտ եւ ժամանակին: Բացի վստահելի գործընկեր լինելուց, նաեւ լավ ընկեր է»:

Ոստիկանության կապիտան Բոնդարեւան ունի պրոֆեսիոնալ ծառայակից ընկերներ, ղեկավարություն ու ենթականեր: «Լավագույնի կոչումը նաեւ նրանցն է»,- ասում է 2018 թվականի պահպանության լավագույն ծառայողը:

Այսքանը՝ լավագույնների բաժնի լավագույն ծառայողի մասին: Կարծում ենք՝ առիթներ կունենանք անդրադառնալու Գյումրիի ոստիկանության լավագույն ծառայողներին: Նրանք այստեղ շատ են:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

Կպորինություններ «Սեւան» ազգային պարկում

Սկիզբը՝ էջ 1

Մաքրման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություն էր իրականացրել «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» փակ բաժնետիրական ընկերությունը: 2015 թ. կազմվել ու բնապահպանության նախարարության բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակի եւ սույն ընկերության պաշտոնատար անձանց կողմից ստորագրվել են մաքրման աշխատանքները ողջ ծավալով կատարված լինելու վերաբերյալ կեղծ կատարողական ակտեր. «Ճամբարակի ճանապարհաշինարարական շահագործման ձեռնարկություն» բաց բաժնետիրական ընկերության տնօրինությունը յուրացրել է 24 միլիոն 630 դրամից ավելի գումար:

Քրեական գործ է հարուցվել:

«Գրիֆթյոր» երիտասարդները

Հուլիսի 21-ին համացանցում տեսագրություն էր հրապարակվել, ուր երեւում է, թե ինչպես են երկու վարորդ «Նիվա» մակնիշի ավտոմեքենաներով Գեւորգ Չաուշի հրապարակում դիտավորյալ թույլ տալիս երթեւեկության կանոնների կոպիտ խախտումներ՝ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսեւորելով երթեւեկության մյուս մասնակիցների նկատմամբ եւ վտանգելով նրանց կյանքն ու առողջությունը:

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության, Մաշտոցի բաժնի ծառայողները, ճանապարհապարեկային ծառայության բաժնի եւ ճանապարհային ոստիկանության մայրաքաղաքը սպասարկող ստորաբաժանման աշխատակիցների հետ համատեղ, միջոցառումներ ձեռնարկեցին՝ պարզելով մեքենաները վարած անձանց ինքնությունը: Երիտասարդները հայտնաբերվեցին ու ենթարկվեցին վարչական պատասխանատվության:

Հարգելի՛ վարորդներ, պահպանեք երթեւեկության ու համակեցության կանոնները: Ոստիկանությունն օպերատիվ արձագանքելու է բոլոր ահազանգերին՝ պատասխանատվության ենթարկելով օրինազանցներին:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

«Վիրտուալ» հարաբերություններ

Սոցիալական ցանցերը միլիոնավոր մարդկանց հնարավորություն են ընձեռում շփվել միմյանց հետ, ծանոթություններ հաստատել, իսկ հոգեբանները պնդում են, որ սոցիալական ցանցերը թաքնված վտանգ են պարունակում դրանցից օգտվողների ֆիզիկական ու հոգեկան առողջության համար: Սոցիալական ցանցերում շփումը, լինելով գրաքննությունից դուրս միջավայր, կարող է բացասաբար ազդել նույնիսկ չափահաս մարդկանց հոգեվիճակի վրա, մինչդեռ օգտվողների մի հսկայական բանակ անչափահասներ են:

Ամենավտանգավորը ինտիմ ծառայությունների առաջարկներն ու պոռնոգրաֆիայի գովազդն են, ու եթե հաշվի առնենք, որ սոցիալական ցանցերից օգտվողների մեջ շատ են դպրոցական տարիքի երեխաները, ապա պարզ կդառնա, թե նման տեղեկատվությունն ինչ ազդեցություն կարող է ունենալ նրանց ներաշխարհի վրա:

Ոստիկանություն դիմած 34-ամյա կինը հայտնում էր, որ ինտերնետային կայքի միջոցով ծանոթացել է ոմն Կարենի հետ: Ոսկերիչ ներկայացած երիտասարդի հետ վիրտուալ սեր են խաղացել, իսկ որոշ ժամանակ անց Կարենը փող էր խնդրել: Պահանջված յոթանասունհինգ հազար դրամը դյուրահավատ աղջիկը փվել էր ոմն Գուրգենի, որն իբր Կարենի զարմիկն էր: Հետո «ոսկերիչ» երիտասարդին աղջկա զարդերն էին պետք եկել, ու դրանք էլ էր ստացել: Հերթը հասել էր նոթբուքին. այս պահանջն արդեն ուղեկցվել էր սպառնալիքով: Վերջապես հասկանալով, որ խաբված է, աղջիկը դիմել էր ոստիկանություն:

Խարդախության կասկածանքով բերման ենթարկվեց բուհերից մեկի ուսանող Գեղամ Պետրոսյանը: Պարզվեց, որ ոմն Կարենը իրականում Վաղինակ Հովսեփյանն էր՝ Գեղամ Պետրոսյանի ընկերը: Հենց նրա մտահղացումն էր այս խաբեությունը:

Ոստիկանություն դիմած մեկ այլ կին հայտնում էր, որ «Օդնոկլասնիկի» ինտերնետային կայքի միջոցով ծանոթացել է ոմն Արմանի հետ: Համացանցային ծանոթությունը տեւել էր մի քանի օր, իսկ հետո Արմանը էլեկտրոնային հասցեին էր ուղարկել աղջկա՝ մերկ վիճակում արված լուսանկարը եւ սպառնացել, որ կտրածի կայքերում, եթե իրեն չվճարի երկու հարյուր հազար դրամ: Շանտաժի ենթարկված աղջիկը ոստիկանությունում պնդում էր, որ լուսանկարը ֆոտոշոփով արված կեղծիք է. համակարգչից վերցվել էր իր լուսանկարը եւ կցվել ուրիշի մերկ մարմնի պատկերին:

Աղջիկը պահանջվող գումարը չուներ եւ դրա դիմաց համակարգիչն էր առաջարկել, սակայն վիրտուալ ծանոթը պահանջել էր համակարգչին գումարել հարյուր քառասուն հազար դրամ: Պայմանավորվել էին հանդիպել մետրոպոլիտենի «Շենգավիթ» կայարանի մոտ: Համակարգիչն ու փողը հանձնելու պահին էլ ոստիկանության աշխատակիցները բերման ենթարկեցին Արմեն Շիրինյանին:

Մեր նպատակն ամենեւին էլ սոցիալական ցանցերի փնովումը չէ: Պարզապես նախազգուշացնում է հնարավոր փհաճ անակնկալների մասին, որոնք սպառնում են վիրտուալ աշխարհի ինքնամոռաց «բնակիչներին»:

Հրապարակումը նախազգուշացնում է, որ թեեւ սոցիալական ցանցերում ամեն ինչ վիրտուալ է, սակայն իրական են ժամանակը, ֆինանսները, դրամական հոսքերն ու մարդկանց զգացմունքները: Եվ ինչպես իրական կյանքում, ցանկացած գործընթաց կարող է օգտագործվել հանցավոր նկրտումներով տարբերի կողմից՝ հանցավոր նպատակներով:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Վեճ ավտոկայանում

Հուլիսի 8-ին Աշտարակի ավտոկայանում վիճաբանություն էր եղել:

Ոստիկանության օպերատիվ խումբը անմիջապես մեկնել էր նշված հասցե եւ կանխել հետագա զարգացումները: Դեպքի վայրում ոստիկանները պարզեցին, որ Երեւանյան փողոցում վիճաբանություն է եղել մի քանի քաղաքացիների միջեւ, ինչը վերածվել էր ծեծկռտուքի: Այդ ընթացքում նրանցից մեկը իր մոտ եղած գազային ատրճանակով կրակել էր:

Ոստիկանները երկու կասկածյալներին, մեքենայով հանդերձ, բերման ենթարկեցին ոստիկանություն:

Ճշտվեց միջադեպի բոլոր մասնակցների ինքնությունը:

Ձեռնարկվում են միջոցառումներ դեպքի հանգամանքները պարզելու եւ միջադեպի մյուս մասնակիցներին հայտնաբերելու ուղղությամբ:

Հարուցված քրեական գործով կատարվում է քննություն:

Ն. Ս.

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

«Ընկերական» հարաբերություններ

Սպիտակ քաղաքի բնակիչ Անդրանիկ Գալստյանը ուղեւորվեց Վանաձոր՝ Գեւորգ Թադեւոսյանին հանդիպելու. ինչ-ինչ գործեր ուներ: Նախապես չէր պայմանավորվել: Համոզված, որ նա ընկերուհու՝ Լուսինեի տանն է, միանգամից գնաց այնտեղ: Սակայն Գեւորգն այնտեղ չէր:

Լուսինեն Անդրանիկին հրավիրեց տուն՝ վստահ, որ Գեւորգը ուր որ է կգա: Իսկապես, քիչ անց եկավ ու ծանոթին ընկերուհու տանը տեսնելով՝ զարմացավ, նաեւ զայրացավ, բայց զայրույթը ցույց չտվեց: Միասին սեղան նստեցին ու մի քանի բաժակ օղի խմեցին:

Գեւորգի քողարկված զայրույթը հերթական բաժակից հետո «գլուխ բարձրացրեց»: Անդրանիկից բացատրություն պահանջեց, թե ինչու է առանց իր գիտության եկել ընկերուհու տուն: Անդրանիկի պատասխանը, թե եկել էր իրեն հանդիպելու, արժանահավատ չհամարելով՝ սկսեց վիճել: Իրար քաշքշեցին, խփեցին...

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Բազումի բաժնի աշխատակիցները: Նյութերի նախապատրաստման ընթացքում կողմերը բացատրություն տվեցին: Երկուսն էլ խախտել էին քրեական օրենսգրքի 118 հոդվածի պահանջները: Սակայն բողոքի բացակայությամբ քրեական գործի հարուցումը մերժվել է:

Ստեփանավան քաղաքի բնակիչ Հովհաննես Ապրեսյանը կալանավայրում ծանոթացել էր վանաձորցի Կարեն Պետրոսյանի հետ: Ազատվելուց հետո հաճախ հեռախոսով շփվում էին, միմյանց մասին տեղեկանում: Մի օր էլ, երբ Հովհաննեսը Վանաձորում էր, զանգեց Կարենին: Երկուսն էլ ոգելիցի ազդեցության տակ էին: Պայմանավորվեցին հանդիպել ու միասին ժամանակ անցկացնել:

Հանդիպման առաջին րոպեները ջերմ էին: Սակայն ընթացքում իրար չհասկացան ու սկսեցին վիճել ինչ-որ հարցի շուրջ: Կրքերը գնալով թեժացան, որի ընթացքում էլ Հովհաննեսը խփեց Կարենին:

Կատարվածի վերաբերյալ ոստիկանության Բազումի բաժնում նյութեր նախապատրաստվեցին:

Հովհաննես Ապրեսյանը կատարել էր արարք՝ քրեական օրենսգրքի 118 հոդվածի հատկանիշներով: Դիմողի բողոքի բացակայությամբ, սակայն, քրեական գործի հարուցումը մերժվել է:

«Հավերժական թեմա»

Շիրակի մարզի Փանիկ գյուղի բնակիչ Ռազմիկ Աղաջանյանը 1992-ին ամուսնացավ Գայանեի հետ: Ռազմիկի մայրը՝ Անահիտը, հարսին լավ էր վերաբերվում, ինչը փոխադարձ էր:

2016-ից, սակայն, հարս ու սկեսուրի հարաբերություններում ինչ-ինչ խնդիրների պատճառով լարվածություն առաջացավ: Չնչին առիթով վիճում էին: Վերթական վեճը չուշացավ:

Տան մաքրությամբ, եփել-թափելով հիմնականում զբաղվում էր Գայանեն: Այդ օրն էլ տները մաքրեց ու ինչ-ինչ գործերով գնաց Արթիկ: Ժամեր անց վերադառնալով՝ հատակը կեղտոտված տեսավ: Սկեսուրի հետ նոր վեճի առիթ էր: Վիճեցին, այդ ընթացքում Անահիտը խփեց Գայանեին:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Արթիկի բաժնի աշխատակիցները: Նյութեր նախապատրաստվեցին, որի ընթացքում կողմերը բացատրություն տվեցին:

Բողոքի բացակայությամբ քրեական գործի հարուցումը մերժվել է:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ամսվա «մարմնի լեզվով»

Մարմնական երեւույթների միջոցով կարելի է որոշ չափով հասկանալ մարդու բնավորությունը, տվյալ պահի տրամադրությունը: Փորձենք սահմանել՝ մարմնի լեզուն մարմնի տարբեր հատվածների շարժումների եւ դիրքերի նշանային տարրերի համախումբն է, որոնց (ինչպես եւ բառերի) օգնությամբ կառուցվածքայնորեն ձեւավորվում եւ կոդավորվում են մտքեր եւ զգացումներ, փոխանցվում են տարբեր գաղափարներ եւ հույզեր: Դիմախաղերը, գլխի եւ ոտքերի ժեստերը, մարմնի տարբեր կեցվածքները, քայլվածքը նույնպես վերաբերում են մարմնի լեզվին:

Ձայնի տոնայնությունը, դիմախաղը, ժեստերը երբեմն ավելի նշանակալից են, քան բառերով արտաբերվածը: Մեզնից յուրաքանչյուրը կարող է հիշել, թե ինչպես որոշ դեպքերում հարցին պատասխանել է բազմանշանակ հայացքով, կամ կարդացել է նմանատիպ «պատասխան»՝ զրուցակցի դեմքին: Այսպիսի շփումը կոչվում է ոչ վերբալ: Փորձը ցույց է տալիս, որ ոչ վերբալ շփման միջոցով փոխանցված տեղեկատվությունը վստահելի է վերբալ շփման ժամանակ ստացված տեղեկատվությունից: Խոսքը այն դեպքի մասին է, երբ մարդն ասում է մի բան, սակայն դեմքին «գրված է» բոլորովին այլ բան:

Հետազոտությունները փաստում են, որ խոսքի օգնությամբ փոխանցվում է տեղեկատվության ընդամենը 7%-ը, իսկ 30-40%-ը ստանում ենք հնչյունային ազդանշանների միջոցով, ինչպիսին են ձայնի տոնը եւ ինտոնացիան: Տեղեկատվության մնացած ծավալը ստանում ենք մարդու դիմախաղից, ժեստերից եւ կեցվածքից:

Չափազանց կարեւոր է տիրապետել սեփական մարմնին եւ փոխանցել ճիշտ այն տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է տվյալ մարդուն: Հաճախ ժեստերը կարդում ենք անգիտակցաբար՝ կատարելով միանգամայն գիտակցված եզրակացություններ: Ի դեպ, Արեւմուտքում, սկսած միջին օղակից, մենեջերները պարտադիր պետք է տիրապետեն մարմնի լեզուն վերծանելու եւ վերլուծելու կարողությանը:

Քննարկենք որոշ ժեստերի եւ «մարմնի լեզվի» դրսեւորման տարբեր ձեւերի նշանակությունը:

Անկեղծության ժեստեր: Ափերով վեր բացված ձեռքերը, ուսերի թոթվումը, որն ուղեկցվում է բացված ձեռքերի ժեստով, ինչպես եւ զրույցի ընթացքում պիջակի կոճակներն արձակելով կամ պիջակը հանելով:

Պաշտպանական ժեստեր: Այս ժեստերի օգնությամբ արձագանքում են հնարավոր կոնֆլիկտային իրավիճակներին: Օրինակ՝ զրուցակիցը կարող է խաչել ձեռքերը, ինչպես եւ բռունցք անել:

Ձանձրույթի ժեստեր: Դրանք կարող են արտահայտվել ոտքերը գետնին թփթփացնելու, գրիչի կափարիչը անընդմեջ չրխկացնելու մեջ: Մարդը կարող է ունենալ դատարկ հայացք, ինչպես եւ՝ մեքենայաբար նկարել թղթի վրա:

Գաղտնապահության եւ կասկածի ժեստեր: Զրուցակիցը փակում է բերանը, փորձ է արվում թաքցնել սեփական դիրքորոշումը քննարկման ընթացքում: Ցուցամատը դիպցնում է քթին կամ տրորում է այն (կարող է նաեւ տրորել աչքերը):

Վստահության ժեստեր: Ձեռքերը միացված են գմբեթաձեւ: Այս ժեստը կարող է նշանակել վստահության, ինչպես եւ՝ որոշակի ինքնագոհության, եսասիրության եւ հպարտության առկայություն (տարածված է ղեկավար-ենթակա հարաբերություններում):

Բարձր, ուղիղ պահված գլուխ: Ինքնավստահության, ներքին ազատության ինքնազգացողություն: Պարզություն եւ ուշադրություն՝ շրջապատող աշխարհի նկատմամբ: Աշխարհի հետ վստահ փոխազդեցության, ակտիվության պատրաստվածություն:

Գլխի հետգցում: Գործունեության ակտիվ պատրաստություն կամ ցանկություն, մարտահրավեր ուրիշների նկատմամբ: Համապատասխանաբար՝ քաջ, իմպուլսիվ, գայթակղվող, աներեր դեպի վեր գնացող անձնավորության:

Շարունակելի

Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ

Զվարճալի ամփոփագիր

Առնետարոս

Հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ ոտնաթաթի վնասվածքով բուժօգնության է դիմել 30-ամյա մի տղամարդ: Նա հայտնել է, որ իրենց բակում որսորդական հրացանով պատահաբար կրակել է ոտքին:

Ոստիկանները պարզել են, որ տղամարդը նկատել է բակի կողքով անցնող ջրանցքի վրա կանգնած առնետի եւ հրացանով ցանկացել է սատկացնել, սակայն լիցքավորման ժամանակ պատահաբար կրակել է իր ոտքին:

Անսպառ ավյունով ծերունին

Պոլիկլինիկայից հաղորդում է ստացվել, որ սալջարդներով բուժօգնության է դիմել մի ամուսնական զույգ:

Ոստիկանները պարզել են, որ կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ ամուսնու 85-ամյա հայրը ձեռնափայտով մի քանի անգամ հարվածել է որդուն, հետո ձեռքով խփել է հարսի գլխին ու դեմքին:

Ուզում էր իմանալ երկու անգամ

Քրեական հետախույզները, գողություն կատարելու կասկածանքով, բերման են ենթարկել 56-ամյա մի տղամարդու: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է «Ուզում եմ իմանալ» վերնագրով գիրք: Տղամարդը հայտնել է, որ գիրքը գողացել է գրախանութից:

Պարզվել է, որ նա էլի էր «ուզել իմանալ». նույն խանութից մի անգամ էլ է գողացել նույն գրքից:

Առանց ելակի

Ճանապարհային ոստիկաններին է դիմել 71-ամյա մի տղամարդ: Նա հայտնել է, որ մի «Օպելի» վարորդ երկու կիլոգրամ ելակի դիմաց իրեն վճարել է կեղծ 50 դոլարանոց, որպես մանրոն վերցրել հինգ հազար դրամ եւ հեռացել:

Ձեռնարկված որոնողական աշխատանքների շնորհիվ վարորդը հայտնաբերվել եւ, մեքենայով հանդերձ, բայց՝ առանց ելակի, բերման ենթարկվել բաժին, որտեղ տվել է խոստովանական բացատրություն:

Ռեկվիզիտը՝ ծառի տակ

Հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ բուժօգնության է դիմել 44-ամյա մի տղամարդ: Նա հայտնել է, որ բակում ծառից ընկնելիս գրպանի դանակով վնասել է իրեն:

Ոստիկանները ծառի մոտ հայտնաբերել են դանակ: Վնասված տղամարդու կինը հայտնել է, որ այն պատկանում է ամուսնուն, որը նա միշտ պահում է իր մոտ:

Այս բեմականացումը, սակայն, հավատ չի ներշնչել: Ոստիկանները պարզել են, որ վիճաբանության ժամանակ կինը ամուսնու ձեռքից փորձել է վերցնել դանակը՝ անզգուշաբար պատճառելով վնասվածք:

Հանցագործության տարօրինակ գործիքներ

Կեսգիշերին ոստիկանություն է զանգահարել 34-ամյա մի կին եւ հայտնել, որ վիճաբանության ժամանակ ամուսինը ննջարանի պատուհանը եւ լոգարանի դուռը դիտավորությամբ բացելով՝ հարվածել է դեմքին, իսկ ձեռքով հարվածել ուսին:

Պատկերացնել կարելի է, թե դեռ ինչքան հանցագործության գործիքներ կան նրանց տանը:

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ հուլիսի 18-ից 25-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 35 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր սպանության, 1-ը՝ դիտավորությամբ առողջությանը թեթեւ վնաս պատճառելու, 2-ը՝ ծեծի,1-ը՝ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու, 1-ը՝ գողության, 2-ը՝ խարդախության, 1-ը՝ խարդախության եւ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու, 1-ը՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու,1-ը՝ իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու, 1-ը՝ ինքնիրավչության, 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ հափշտակելու կամ վնասելու, 2-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու,1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու եւ պետական սահմանն ապօրինի հատելու, 1-ը՝ սուտ ցուցմունք կամ կեղծ եզրակացություն տալու կամ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 4 հետախուզվող:

Արձանագրվել է 109 ճանապարհատրանսպորտային պատահար. 3 մարդ զոհվել է, 145-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 32 դեպք. 2 մարդ զոհվել է, 31-ը ստացել են մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հանրապետության ճանապարհներին

Հուլիսի 22-ին Երեւանի Բաբաջանյան փողոցում «Հոնդա» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել երկու քաղաքացիների, որոնք մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հուլիսի 22-ին Վանաձոր-Բագրատաշեն ճանապարհի 60-րդ կմ-ին «Նիսան Իքստեռռա» մակնիշի ավտոմեքենան բախվել է «Ֆորդ Տրանզիտ» մակնիշի ավտոմեքենային եւ դուրս գալով երթեւեկելի մասից՝ բախվել ճամփեզրի պատնեշին. 31-ամյա վարորդը եւ երեք ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հուլիսի 22-ին Երեւան-Մեղրի Մ-2 ճանապարհի 83-րդ կմ-ին «ՎԱԶ-21065» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ բախվել էլեկտրասյանը. 29-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հուլիսի 23-ին Երեւանի Մաշտոցի պողոտայի եւ Մոսկովյան փողոցի խաչմերուկում իրար են բախվել «Մերսեդես», «ԲՄՎ» եւ «Օպել» մակնիշի ավտոմեքենաներ. «Օպել»-ի 78-ամյա վարորդը եւ «ԲՄՎ»-ի 30-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հուլիսի 23-ին Երեւանի Էրեբունու փողոցում «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 79-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հուլիսի 23-ին Երեւանի Կոմիտասի պողոտայում «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 55-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հուլիսի 23-ին Արարատի մարզի Հովտաշեն գյուղում «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել դաշտամիջյան ճանապարհից եւ ընկել Հրազդան գետը. 36-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հուլիսի 23-ին Ճամբարակ քաղաքի Գարդմանի փողոցում «Ֆոլքսվագեն Գոլֆ» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ բախվել ցանկապատին. 28-ամյա վարորդը եւ 33-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հուլիսի 23-ին Մարտունի քաղաքի Գ.Ջիրոյան փողոցում «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 32-ամյա քաղաքացու, ապա բախվել է նրա «Ֆոլքսվագեն-Գոլֆ» մակնիշի ավտոմեքենային. տուժողը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հուլիսի 23-ին Վանաձոր-Սպիտակ ճանապարհի 3-րդ կմ-ին իրար են բախվել «ԲՄՎ-Х5», «ԲՄՎ-320» եւ «Տոյոտա Վիտս» մակնիշի ավտոմեքենաներ. «Տոյոտա Վիտս»-ի 56-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հուլիսի 23-ին Երեւան-Աշտարակ ճանապարհի 5-րդ կմ-ին Կոտայքի մարզի Պռոշյան գյուղում «ՎԱԶ-2109» մակնիշի ավտոմեքենան բախվել է կայանված «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենային, այնուհետեւ վրաերթի է ենթարկել ճամփեզրին կանգնած 14-ամյա տղայի. պատանին եւ «ՎԱԶ-2109»-ի 50-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հուլիսի 24-ին Գավառ քաղաքի Հ. Աբրահամյան փողոցում «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ բախվել բետոնե արգելապատնեշին. 23-ամյա վարորդը եւ 26-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

Դալին, վիրաբույժը, մարդասպանը...

Ֆրանսիական Պերպինյան քաղաքը, ինչպես եւ Տարասկոնը, ասենք, շատ ուրիշները նույնպես, նշանավոր են դարձել արվեստի վարպետների ստեղծագործությունների անվանադիրը լինելով: Տարասկոնը հայտնի է իր Տարտարենով, իսկ Պերպինյանը՝ երկաթուղային կայարանով, որն իր նշանավոր սյուրռեալիստական կտավներից մեկում պատկերել է Սալվադոր Դալին: Այդ քաղաքի անունը ֆրանսիական թերթերի առաջին էջերում հայտնվեց՝ կապված ողբերգական իրադարձությունների հետ: Երկաթուղային կայարանում հայտնաբերվում էին ջահել աղջիկների խեղանդամված դիակներ...

Առաջին դիակը հայտնաբերվեց Ծնունդյան տոների նախօրեին՝ երկաթուղային կայարանից ոչ հեռու:

Տեսնելով, թե անհայտ սադիստն ինչպես է վարվել տասնիննամյա Մոքթարյա Խաիբի հետ, ոստիկանները ցնցվեցին. աղջկա որոշ մարմնամասեր այնպիսի հմտությամբ էին կտրված, որ կարելի էր ենթադրել, թե մոլագարը փորձառու վիրաբույժ է:

Երկու շաբաթ անց ոստիկանությունը ձերբակալեց Անդրե Պալոմինո Բարիոսին՝ վիրաբույժ, որն ապրում էր կայարանից ոչ հեռու:

Բարիոսը սպանության գիշերվա համար ալիբի չուներ: Բացի այդ՝ գտնվեց վկա, որը տեսել էր, թե սպանության օրվա առավոտյան Բարիոսն ինչպիսի խնամքով է լվանում իր ավտոֆուրգոնը: Ծուտափույթ բացահայտման ծարավի մամուլի ներկայացուցիչները, տեղեկանալով, որ Բարիոսը ծնունդով Պերուից է, նրան անմիջապես կնքեցին «լատինական Ջեք Փորոտիքող» անունով:

Անդրե Բարիոսի մեղավորության հարցում ոստիկանները կասկածներ չունեին: Բայց եւ նրա դեմ լուրջ հանցանշաններ չկային: Սակայն, չնայած դրան, շտապեցին նրան «կպցնել» նաեւ 1995 թ. պարմանի գեղեցկուհի Տատյանա Անդույարի անհետացման գործը. աղջկան վերջին անգամ տեսել էին այդ նույն կայարանում: Տասնութամյա ուսանողուհին այն ժամանակ անհետ չքացել էր, նրա դիակն այդպես էլ չէր հայտնաբերվել:

Կասկածյալի ավտոֆուրգոնը մանրակրկիտ զննելով հանդերձ, փորձագետները, որքան էլ ցանկանային, այդպես էլ չկարողացան հայտնաբերել Մոքթարյա Խաիբի արյան հետքերը: Խուզարկուների տնօրինության տակ միայն ալիբիի բացակայությունն էր, կասկածյալի վիրաբույժ լինելը եւ այն, որ նա ապրում է կայարանի մոտ: Սակայն դրանք կողմնակի հանցանշաններ էին եւ չէին բավարարի դատաքննությանը:

Ավելին, հետագայում տեղի ունեցավ մի իրադարձություն, որով վերջնականապես ապացուցվեց, որ Անդրե Բարիոսը հիշյալ սպանության գործով մեղավոր ճանաչվել չի կարող:

Պերպինյանի բնակիչներից մեկը, որն իր շանը հանել էր զբոսանքի, երկաթուղային կայարանից ոչ հեռու աղջկա խեղանդամված դիակ էր հայտնաբերել. քսաներկուամյա քարտուղարուհի Մարի-Հելեն Գոնզալեսի դին էր: Աղջիկը անհետացել էր տասը օր առաջ: Նրա ազգականները հայտնեցին, որ աղջկան նստեցրել են Պերպինյան մեկնող գնացքը, ինչից հետո նրան այլեւս ոչ ոք չի տեսել:

Մարի-Հելենի դիակն ավելի սարսափելի վիճակում էր, քան Խաիբինը. կտրված էին նաեւ գլուխն ու ձեռքերը: Դրանք հետագայում հայտնաբերվեցին քաղաքի այլ մասում գտնվող ջրանցքում:

Ճիվաղի հանցավոր «ձեռագիրն» ակնհայտորեն վկայում էր, որ երկու ոճրագործությունները կատարել է նույն մարդը: Դա Անդրե Պալոմինո Ֆարիոսը լինել չէր կարող, թեկուզեւ այն պատճառով, որ Մարի-Հելեն Գոնզալեսի սպանության օրը նա գտնվում էր բանտում:

Օգոստոսին պերուացուն գրավով բաց թողեցին՝ ստորագրություն վերցնելով՝ քաղաքից չբացակայելու վերաբերյալ: Նրա վրայից դեռեւս հանված չէր Մոքթարյա Խաիբի սպանության կասկածը:

Մարի-Հելեն Գոնզալեսի դիակը հայտնաբերելուց հետո պարզ դարձավ, որ Պերպինյանում սերիական սադիստ-մոլագար է գործում, որը գազանային հաշվեհարդար է տեսնում ջահել աղջիկների հետ հատկապես երկաթուղային կայարանի մերձակայքում: Բայց ո՞վ է նա: Այս հարցը դեռեւս անպատասխան է:

Բայց, ահա, հերթական անգամ մարդասպանի հոգեբանական դիմանկարը կազմելիս հանկարծ հիշեցին Սալվադոր Դալիին, որն առանձնահատուկ սեր էր տածում Պերպինյանի եւ նրա երկաթուղային կայարանի հանդեպ:

Այնտեղ ժամանելով՝ նկարիչն ընկնում էր էքստազի մեջ՝ Պերպինյանը համարելով տիեզերքի կենտրոն: Դալին այդ քաղաքն անվանում էր «իմ սրբազան աուրան» եւ կատարյալ լրջությամբ պնդում, թե միլիոնավոր տարիներ առաջ, երբ մեր մոլորակի մայրցամաքները տրոհվելով բաժանվել են, այդ վայրն է փրկել Եվրոպան:

1965 թվականին Դալին ստեղծեց «Կայարանը Պերպինյանում» կտավը, որը կնոջ դեմ կատարվող բռնություն է պատկերում: Կտավն արված է մեծ սյուրռեալիստին հատուկ ոճով. կանանց խոշտանգված մարմինները բացահայտ սեքսուալ կեցվածքներ ունեն, կտրված են սեռական օրգանները: Հետեւողականորեն հետազոտելով այս կարգի, հատկապես՝ «Sex-appeal» ուրվականի կերպարանքով կամ «Անարատ կույսի սոդոմական ինքնաբավարարումը» ստեղծագործությունները, խուզարկուներն ապշեցուցիչ նմանություն գտան նկարների խոշտանգված կանանց եւ Պերպինյանի երկաթուղային կայարանի մերձակայքում հայտնաբերված դիակների միջեւ:

Հանցագործին առաջվա պես որոնում էին այն անձանց շրջանում, ովքեր առնչություն ունեն վիրաբուժության հետ, սակայն հետաքննությունն արդեն նաեւ զուգահեռ վարկած էր մշակել. ոճրագործը կարող է նաեւ Սալվադոր Դալիի այլասերված տաղանդի երկրպագուն լինել...

Անվտանգության դաշնային ծառայության բացահայտումը

Ռուսաստանի դաշնային անվտանգության ծառայությունը կալանավորել է իր երկու աշխատակիցներին, որոնք մեղադրվում են գործարարից դրամական միջոցների հափշտակման մեջ:

Դեռեւս 2019 թվականի ապրիլին կալանավորվել էր Ռուսաստանի Անվտանգության դաշնային ծառայության «Կ» վարչության նախկին պետ, գնդապետ Կիրիլ Չերկալինը:

Կիրիլ Չերկալինի ղեկավարած ծառայությունը վերհսկում էր երկրի տնտեսական անվտանգության հետ կապված հարցերը: Նա մեղադրվում է 490 միլիոն ռուբլու հափշտակության մեջ:

Կիրիլ Չերկալին հետ ձերբակալվել են նաեւ նույն ծառայության երկու գնդապետներ: Ընդհանուր առմամբ՝ անվտանգության ծառայության այս երեք գնդապետները հափշտակել են 12 միլիարդ ռուբլի:

Կիրիլ Չերկալինին մեղադրանք է առաջադրվել նաեւ 850 հազար դոլար կաշառք վերցնելու համար: Նա գումարը ստացել էր 2013-2015 թվականների ընթացքում՝ մասնավոր ընկերություններից մեկի հովանավորության համար:

Զինագործ ոսկերիչը

Ավստրալիայի Սիդնեյ քաղաքի բնակիչ Անժելոս Քութսը, բացի ոսկերչությունից, իշխանություններից գաղտնի կազմակերպել էր երկրորդ արհեստանոցը, որտեղ պատրաստում էր գնդացիր-ատրճանակներ, հիմնականում՝ Ingram MAC-10 մակնիշի զենքի նմանակները:

Ինչպես նշում է ավստրալական ոստիկանությունը՝ ինքնուս զինագործ Անժելոս Քութսը կարողացել է պատրաստել բավական բարձր որակի զենք: Նա ատրճանակը վաճառում էր երկու պահունակով եւ խլացուցիչով:

Անժելոս Քութսի հիմնական հաճախորդները տեղի հանցագործներն էին:

Ի վերջո, ոստիկանությանը հաջողվեց բացահայտել հանցագործությունը. ինքնուս զինագործը հայտնաբերվեց ու կալանավորվեց:

Հետաքննության ընթացքում պարզվել է, որ Անժելոս Քութսը պատրաստել է շուրջ 100 գնդացիր-ատրճանակ:

Դակաորինական գործունեության համար Անժելոս Քութսը դատապարտվեց չորս տարվա բանտարկության:

Պատրաստեց **Ռուբեն ՍԱՀԱԿՅԱՆԸ**

Բազմադրվագ գողությունները բացահայտվեցին

Քսաներկուամյա Նարեկ Պետրոսյանը բազմադրվագ գողությունների հեղինակ է: Ասում է, իբր մանկատան երեխաներին օգնելու համար է գողություններ արել: Մանկատուն ուղարկած իրերի, քաղցրավենիքի եւ խաղալիքների դիմաց նույնիսկ շնորհակալագրեր էր ստացել:

Բացատրական աշխատանքի արդյունքում Նարեկը պատմեց կատարած բոլոր գողությունների մասին: Գողացած մեծ թվով համակարգչային տեխնիկան շատ ավելի մեծ արժեք ուներ, քան մանկատներին ուղարկվածը: Ուստի սուտը երկար պահել չկարողացավ եւ խոստովանեց, որ գողությունների գլխավոր պատճառը եղել են անձնական կարիքներն ու պարտքերը, իսկ բարեգործություն «ձեռի հետ» է արել:

Առաջին անգամ չէր, որ Նարեկը գործ էր ունենում իրավապահների հետ. երկու անգամ հասցրել էր դատապարտվել՝ զինծառայության ընթացքում պարտականությունները կատարելուց հրաժարվելու, զորացրվելուց հետո էլ՝ գողության համար:

Ոստիկանության Մաշտոցի բաժին բերման ենթարկվեց գողություն կատարելու կասկածանքով: Պարզվեց՝ մտել էր Երեւանի տարբեր վարչական շրջանների մանկապարտեզներ, դպրոցներ, ինտերնետ-ակումբներ ու հիմնականում համակարգիչներ գողացել: Երբ ձեռքը գողության վարժվեց, որոշեց հարազատ դպրոցն էլ թալանել: Անգիր գիտեր համակարգչային սենյակի՝ փողոց նայող լուսամուտները, միակ դժվարությունը ճաղավանդակներն էին: Ընտրեց դրանցից ամենաթույլը եւ գիշերը հեշտությամբ պոկեց: Տարավ բոլոր հինգ համակարգիչները՝ թողնելով միայն երկու բարձրախոս, որոնք վաղուց պիտանի չէին: Այնքան հմտությամբ էր գործը գլուխ բերել, որ երկու դասասենյակ այն կողմ հանգստացող պահակը տարօրինակ ոչինչ չէր նկատել: Կատարվածի մասին իմացել էր, երբ տնօրենը, թալանված դասասենյակը տեսնելով, ահազանգել էր ոստիկանություն:

Եկավ մասնագիտական հմտությունը ցույց տալու ոստիկանների հերթը: Անգամ գողին անպիտան թվացած, չաշխատող բարձրախոսները փորձառու քրեական հետախույզներին ստիպում էին ենթադրել, որ կատարողը ոչ միայն տարածքին ու դպրոցի ներքին կառուցվածքին էր ծանոթ, այլեւ ինֆորմատիկայի դասասենյակի սարքավորումների տեխնիկական վիճակին: Հետեւաբար, «գողը տնից էր»:

Քրեական հետախույզները, ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ սկսեցին համապատասխան աշխատանքներ իրականացնել թալանված դպրոցն ավարտած, նաեւ մոտակայքում բնակվող եւ նախկինում գողության համար դատապարտված անձանց շրջանում: Ծուտով կասկածյալը հայտվեց նրանց տեսադաշտում: Իսկ հետո հայտնի դարձան նրա բնակության ու աշխատանքի վայրերը: Հենց աշխատավայրից էլ Նարեկ Պետրոսյանը բերման ենթարկվեց: Խոստովանական ցուցմունք տվեց. պատմեց ոչ միայն հարազատ դպրոցից գողության մանրամասները, այլեւ վերջին ամիսներին կատարածները:

Գողությունների փաստով քրեական գործ է հարուցվել: Գողացված իրերը մասամբ հայտնաբերվել եւ առգրավվել են:

Նախաքննությունը շարունակվում է:

Համայնքային ոստիկանի հորդորով

Հուլիսի 21-ին Արմավիրի մարզում արձանագրվեց ապօրինի պահվող զենք-զինամթերքի կամավոր հանձնման հերթական դեպքը՝ շնորհիվ ոստիկանության Արմավիրի բաժնի համայնքային ոստիկանների բացատրական աշխատանքի:

Նալբանդյան գյուղում ապրող 59-ամյա մի տղամարդ, անսալով համայնքային ոստիկանի հորդորներին, հայտնել էր, որ տանը տարբեր տեսակի ապօրինի զենք-զինամթերք ունի եւ ցանկանում է հանձնել ոստիկանություն: Նրա տուն մեկնած ոստիկաններին տղամարդը ցույց էր տվել զենքերի թաքստոցները:

Հայտնաբերված չորս վառոդային լիցքով նռնականետը, երկու պահունակով «Կալաշնիկովի» ինքնաձիգը, պայթուցիչներով նռնակները, ծխահանները, 450 փամփուշտները ուղարկվել են ոստիկանության փորձաքրեագիտական վարչություն:

Կրկին հորդորում ենք ապօրինի պահվող զենք-զինամթերքը կամավոր հանձնել ոստիկանություն՝ քրեական պատասխանատվությունից ազատվելու համար:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Գողանում էր մեքենաներից

Հուլիսի 20-ին ոստիկանության Կենտրոնական բաժնում հաղորդում էր ստացվել, որ ժամը 19.30-ից 21.30-ն ընկած ժամանակահատվածում կոտրել են Սայաթ-Նովայի պողոտայում կայանված ավտոմեքենայի ապակին եւ գողացել կանացի պայուսակ, որի մեջ եղել է փող, փաստաթղթեր, բանկային քարտ: Հափշտակված քարտից էլ փորձել էին փող կանխիկացնել:

Նույն օրը, կեսգիշերն անց, ստացվեց մեկ այլ ավտոմեքենայից գողության ահազանգ. կոտրել էին Պուշկին-Աբովյան փողոցների խաչմերուկում կայանված մեքենայի ապակին եւ գողացել կանացի պայուսակ ու տղամարդու դրամապանակ, որոնց մեջ եղել էր փող, փաստաթղթեր, բանկային քարտեր, բջջային հեռախոս:

Հանցագործությունները բացահայտելու ուղղությամբ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ոստիկանության ներքին անվտանգության վարչության եւ Կենտրոնական բաժնի ծառայողները պարզեցին, որ գողությունները հնարավոր է կատարած լինի Երեւանում ապրող 30-ամյա տղամարդը: Նա հայտնաբերվեց եւ, գողություն կատարելու կասկածանքով, բերման ենթարկվեց ոստիկանության Կենտրանական բաժին եւ տվեց խոստովանական բացատրություն:

Հարուցվել է քրեական գործ:

Ոստիկանները հանձնաքի պահին

Հուլիսի 21-ի լուսադեմին ոստիկանության Կենտրոնական բաժնի ծառայողները, գողության փորձ կատարելու կասկածանքով, բերման ենթարկեցին երկու քաղաքացու:

Տասնութ եւ քսանյոթ տարեկան երիտասարդները, երեք այլ անձանց հետ, գողության նպատակով փորձել էին լինգով բացել Աբովյան փողոցի խանութներից մեկի դուռը: Սակայն հանցագործությունն ավարտին չէին հասցրել՝ բռնվել էին տարածքում ծառայություն կատարող ոստիկանների կողմից:

Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվեց մետաղյա երեք ձող:

Բերման ենթարկված երիտասարդներից մեկը ոստիկաններին հայտնեց նաեւ, որ ապրիլ-հուլիս ամիսների ընթացքում Կենտրոն վարչական շրջանի տարբեր հատվածներից եւս գողություններ է արել:

Ձեռնարկվում են միջոցառումներ գողության փորձին մասնակից բոլոր անձանց ինքնությունը պարզելու եւ հայտնաբերելու ուղղությամբ: Զուգահեռ աշխատանքներ են տարվում նախկինում կատարած գողություններից տուժածներին պարզելու եւ հաղորդում ընդունելու համար:

Կատարվում է քննություն:

Էրիկ ԱՍՏՎԱՇԱՏՐՅԱՆ

www.police.am

Դանակահարություն Քաջազնունու փողոցում

Հուլիսի 9-ին ոստիկանության Մարաշի բաժանմունքի ծառայողները օպերատիվ տվյալներ էին ստացել, որ նույն օրը Քաջազնունու փողոցի սուպերմարկետի մոտ տեղի է ունեցել վիճաբանություն: Այնուհետեւ հիվանդանոցից էր հաղորդում ստացվել, որ գոտկային շրջանի կտրած-ծակած վերքով բուժօգնության է տեղափոխվել Նար-Դոսի փողոցի 18-ամյա բնակիչ:

Մեկնած օպերատիվ խումբը պարզեց, որ նույն օրը նշված սուպերմարկետի մոտ անհայտ անձը, վիճաբանության ժամանակ, սուր-կտրող-ծակող գործիքով հարվածել է երիտասարդին եւ պատճառել մարմնական վնասվածք:

Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվեց մահականման առարկա եւ ծալովի դանակ:

Ոստիկանության Մարաշի բաժանմունքի ծառայողների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ մարմնական վնասվածք հասցնողը Աշտարակ քաղաքի 18-ամյա բնակիչ է, որը բացատրական աշխատանքների շնորհիվ ներկայացավ Մարաշի բաժանմունք:

Կատարվում է քննություն:

Կրակոց զոքանչի տան մոտ

Հուլիսի 21-ին 65-ամյա մի կին ոստիկանության Գյումրի քաղաքի Մուշի բաժնում հաղորդում է տվել, որ դստեր նախկին ամուսինը իր տան դիմաց կրակել է:

Գյումրիի Շիրակացու փողոցից, խուլիգանություն կատարելու կասկածանքով, 37-ամյա նախկին փեսան բերման է ենթարկվել եւ խոստովանել, որ որսորդական հրացանով մեկ անգամ կրակել է օդ:

Բերման ենթարկվածը ներկայացվել է մարզի քննչական վարչություն:

Նախապատրաստվում են նյութեր:

Ոստիկանները կանխել են գողությունը

Հուլիսի 21-ին ոստիկանության Էրեբունու բաժնի համայնքային ոստիկանները, բնակարանային գողություն կատարելու կասկածանքով, բերման են ենթարկել Խաղաղ Դոնի փողոցի բնակիչ, 49-ամյա մի տղամարդու:

Պարզվել է, որ նա, օգտվելով դուռը բաց լինելու հանգամանքից, գողություն կատարելու նպատակով մտել է Դավիթ Բեկի փողոցի մի տուն, սակայն հանցագործությունն ավարտին չի հասցրել. բռնվել է ոստիկանների կողմից:

Կատարվում է նախաքննություն:

Կապանի ոստիկանների բացահայտումը

Հուլիսի 18-ին «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունից գրություն էր ստացվել, որ ապօրինի մուտք են գործել փոխադրամիջոցների վերանորոգման արտադրամաս, վնասել գեներատորը, առանձնացրել էներգատար մալուխը եւ հափշտակել:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ գողությունը կատարել է նույն ընկերության աշխատակիցը: Նա բերման է ենթարկվել ոստիկանության Կապանի բաժին եւ տվել խոստովանական բացատրություն:

Նախապատրաստվում են նյութեր:

Կորել է

Գարեգին Աշոտի Խաչատրյանի՝ Երեւանի Աճեմյանի անվան առեւտրատնտեսագիտական պետական քոլեջից 2000 թ. ստացած դիպլոմը (K 042927):

Համարել անվավեր:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Ոստիկանությունը տեղեկացնում է՝ թիկնապահի եւ պահնորդի որակավորման ստուգման հանձնաժողովն ընդունում է հայտեր

ՀՀ ոստիկանությունը տեղեկացնում է, որ թիկնապահի եւ պահնորդի որակավորման ստուգման հանձնաժողովն ընդունում է ՀՀ կառավարության 2012 թ. դեկտեմբերի 27-ի թիվ 1671-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով սահմանված փաստաթղթերը 2019 թ. օգոստոսի 1-ից յուրաքանչյուր աշխատանքային օր (ք. Երեւան, Նալբանդյան 130, ՀՀ ոստիկանության հասարակական կարգի ապահովման վարչություն, հեռ. 010596122, 010596436):

Հանձնաժողովին ներկայացվում են հետեւյալ փաստաթղթերը.

1) դիմում, որտեղ պետք է նշվեն՝

ա. դիմորդի անունը, ազգանունը եւ հայրանունը (անձը հաստատող փաստաթղթում հայրանվան առկայության դեպքում),

բ. դիմորդի բնակության վայրը, հեռախոսահամարը, ֆաքսի համարը կամ էլեկտրոնային փոստի հասցեն (դրանց առկայության դեպքում),

գ. դիտավորյալ հանցագործություն կատարած լինելու կամ դիտավորյալ հանցագործության համար դատվածության՝ սահմանված կարգով հանված կամ մարված լինելու վերաբերյալ հանձնաժողովի կողմից կատարվող հարցումներին անձի համաձայնությունը,

2) անձնագիրը եւ դրա պատճենը,

3) համապատասխան մասնագիտական կրթության վերաբերյալ ավարտական փաստաթուղթ՝ դիպլոմ կամ մասնագիտական պատրաստվածության, վերապատրաստման եւ որակավորման բարձրացման դասընթացներ ավարտած լինելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ (վկայական, հավաստագիր եւ այլն),

4) պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից օրենքով սահմանված կարգով ազատված լինելու կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից օրենքով սահմանված կարգով տարկետում ստանալու վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր,

5) 2 գունավոր լուսանկար՝ 3 x 4 չափսի,

6) համապատասխան բուժիհմնարկներում հոգեկան հիվանդության, հարբեցողության կամ թմրամոլության պատճառով հաշվառված չլինելու վերաբերյալ տեղեկանք:

Որակավորման ստուգման անցկացման օրվա, ժամի եւ տեղի վերաբերյալ ծանուցվում է որակավորման ստուգումից առնվազն յոթ օր առաջ:

Միջադեպ՝ մահվան ելքով

Սկիզբը՝ էջ 1

Էրեբունու ոստիկանների ձեռնարկած անհետաձգելի միջոցառումների արդյունքում պարզվեց, որ հիվանդանոց տեղափոխված տղամարդն ու կինն ամուսիններ են, իսկ դանակահարողը՝ նրանց որդին: Երիտասարդը ծնողներին մարմնական վնասվածք էր պատճառել խոհանոցային դանակով:

Քրեական հետախույզները 27-ամյա երիտասարդին հայտնաբերեցին դեպքի վայրին հարակից տարածքում՝ պարանոցի շրջանում ինքնավնասված: Նա տեղափոխվեց հիվանդանոց:

Դեպքի վայրի զննությամբ ոստիկանները հայտնաբերեցին հանցագործության գործիք դանակը:

Հարուցվել է քրեական գործ:

Կատարվում է նախաքննություն:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

Պատիժ՝ երեք տարի անց

Տղամարդը, ում կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնասվածքներ էր պատճառել Արամ Մինասյանը, իր երեք տարիքն ուներ:

Բարեբախտաբար, բժիշկներին հաջողվեց փրկել նրա վայրագությունից տուժածի կյանքը: Փոխարենը՝ Արամ Մինասյանին չհաջողվեց փրկվել քրեական պատասխանատվությունից, որքան էլ փախչել-կորչելու համար ջանք ու եռանդ չխնայեց եւ երեք տարով անհետացավ հանրապետությունից: Դայտնաբերվելուց եւ ոստիկանություն բերման ենթարկվելուց հետո էլ դիմեց «դերասանական ժանրին»՝ իբր ուզում են «իր վրա շառ անել»: Մինչդեռ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումներով դեպքի հանգամանքները վաղուց պարզվել էին՝ պատժից խուսափելու ելք չթողնելով «տաքարյուն» երիտասարդին: «Տաքարյուն» ածականը հենց այնպես չասվեց. «արդարանալու», ապա եւ՝ զղջալու ժամը երբ հասավ, իրեն այդպես ներկայացրեց՝ «տաքարյուն ջահել եմ, պահի տակ չեմ հասկացել՝ ինչ եմ անում»:

Պետրոս Մարգարյանի մթերային խանութը մայրաքաղաքի Աջափնյակ թաղամասի շենքերից մեկի առաջին հարկում էր: Անմիջապես խանութի վերեւում քսաներեքամյա Արամ Մինասյանն էր բնակվում: Վարձակալական հիմունքներով: Նրա անփութության պատճառով խանութում հաճախ էին «անձրեւներ» տեղում: Հաճախ էր Պետրոս Մարգարյանը զայրացած բարձրացել երկրորդ հարկ, նախատել, բայց որոշ ժամանակ անց՝ նույն պատմությունը. ծորակ փակելը մոռանալո՞ւ, թե՞ հինը, քայքայվածը նորով չփոխարինելու պատճառով գիշերը ջուրը նորից ողողում էր խանութը, եւ Պետրոս Մարգարյանը նորից թակում էր անփույթ բնակչի դուռը:

«Չրի պատմությունն», ի վերջո, նոր դրսեւորում ունեցավ, արդեն՝ քրեական հարթությունում: Առավոտյան Պետրոս Մարգարյանը եկավ խանութ, բացեց դուռն ու զայրույթից քար կտրեց՝ ապրանքը ջրի երեսին «լողում էր»...

Բարձրացավ երկրորդ հարկ ու պահանջեց՝ իջիր եւ մաքրիր ջուրը: Բարկացած էր, ուստի շատ կոպիտ ասաց, նաեւ հայհոյեց: Արամ Մինասյանն էլ հայհոյանքին հայհոյանքով պատասխանեց. մեղավորության ոչ մի զգացում, ներողության ոչ մի խոսք:

Պետրոս Մարգարյանը նրա պահվածքից ավելի զայրանալով՝ գոռգոռաց ու հայհոյեց, սպառնաց, որ գույքը փչացնելու համար ոստիկանություն կդիմի:

Դա արդեն Արամը կուլ տալ չէր կարող. «արժանապատվության» հարց էր, մանավանդ, որ հարեւանները լսեցին իրեն ուղղված անպատիվ խոսքերը: «Արժանապատվությունը» վիրավորվեց խիստ, ու պատասխանը բռնցքահարվածներն էին վաքսունն անց «պահանջատիրոջը»: Նա էլ անսպասելի հարվածներից ընկավ եւ կորցրեց գիտակցությունը. գլխով հարվածել էր աստիճանին:

Կանչով ժամանած «շտապօգնության» բրիգադը Պետրոս Մարգարյանին տեղափոխեց հիվանդանոց: Իսկ Արամ Մինասյանը փախավ...

Դատաբժշկական փորձաքննությամբ պարզվեց, որ Պետրոս Մարգարյանին պատճառվել էր մարմնական ծանր վնաս՝ գանգի հիմի առաջնային գանգոսկրի կոտրվածքով ու արնազեղմամբ:

Արամ Մինասյանին հայտնաբերել չհաջողվեց: Իրերը հավաքել ու իր «Օպել»-ով մեկնել էր Վրաստան: Երկու-երեք օր ծննդավայրում մնալուց հետո էլ մեկնել էր Ռուսաստանի Դաշնություն, Կրասնոդարի երկրամասի գյուղերից մեկում գործ էր գտել ու տնավորվել:

Արամ Մինասյանին հայտնաբերելու ուղղությամբ որոնողական միջոցառումները շարունակվում էին: Եվ, ահա, երեք տարի անց, թերեւս մտածելով, որ Հայաստանում ո՛չ իրեն, ոչ էլ արարքն են հիշում, վերադարձավ: Ու հենց Բագրատաշենի սահմանային անցակետից էլ բերման ենթարկվեց ոստիկանության Բագրատաշենի բաժանմունք:

Կասեցված քրեական գործի վարույթը վերսկսվել է:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Ապօրինի ծառահատումներ Լոռիում

Ապօրինի ծառահատումների դեմ պայքարը ոստիկանության առաջնահերթություններից է:

Տարածքային ստորաբաժնումները պարբերաբար ուժեղացված ծառայություններ եւ շրջայցեր են նախաձեռնում օրինազանց ճանապարհով ձեռք բերված փայտանյութ հայտնաբերելու ուղղությամբ, միաժամանակ բնակչության շրջանում տարվում են բացատրական աշխատանքներ:

Հուլիսի 15-ին ոստիկանության Թումանյանի բաժնի համայնքային ոստիկանները ապօրինի ծառահատման վերաբերյալ տեղեկություններ էին ստացել, որոնք ստուգելու նպատակով մեկնել էին Քարինջ գյուղի հարակից՝ Ջաղացի ձոր կոչվող տարածք: Հայտնաբերել էին նոր հատված ծառի կոճղեր, շրջակայքում՝ 4,5 խմ մանրացված փայտանյութ: Փայտանյութի մոտ գտնվող տղամարդը հայտնել էր, որ, առանց թույլատվության, բենզասղոցով կտրել է ծառերը, իսկ փայտանյութը պետք է տեղափոխեր իր տան բակ:

Կեսգիշերն անց, արդեն հուլիսի 16-ին, Թումանյան-Ալավերդի ճանապարհին պարեկային ոստիկաններն էին ստուգման նպատակով կանգնեցրել «Գազ 53-12» բեռնատար: Մեքենայի 32-ամյա վարորդը հայտնել էր, որ բեռնատարը բարձված է 5,5 խմ փայտանյութով, որի համար համապատասխան փաստաթուղթ չուներ:

Նույն օրը ոստիկանության Տարոնի բաժնի ծառայողները Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոցում ստուգման ենթարկեցին «Ֆորդ Տրանզիտ» բեռնատարը: Բեռնախցիկում հայտնաբերվեց 4 խորանարդ մետր փայտանյութ, որի ձեռքբերման վերաբերյալ վարորդը ներկայացրեց անցած տարվա հոկտեմբերին «Հայանտառի» Եղեգնուտի անտառտնտեսության կողմից տրված տոմս: Վարորդը, բեռնատարով հանդերձ, բերման ենթարկվեց ոստիկանության Տարոնի բաժին:

Հուլիսի 16-ի գիշերը Վանաձորի ոստիկանները ստուգեցին նաեւ մեկ այլ «Ֆորդ Տրանզիտ» բեռնատար: Բեռնախցիկում հայտնաբերվեց 2 խորանարդ մետր փայտանյութ, որի ձեռքբերման վերաբերյալ վարորդը փաստաթուղթ չուներ:

Դեպքերի առթիվ նյութեր են նախապատրաստվում:

Էրիկ ԱԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

Ամա՞ռ է...

Ամառ է: Ոմանք հանգիստը կանցկացնեն արտերկրում, ոմանք՝ Հայաստանում: Բայց որտեղ էլ լինի, պետք է պահպանել անվտանգության որոշ կանոններ:

Ներկայացնենք մի քանի խորհուրդ՝ անվտանգ եւ ապահով հանգիստ կազմակերպելու համար:

Հանգստից առաջ նախ պետք է մտածել տան անվտանգության մասին: Եթե մեկնում եք այլ քաղաք կամ երկիր, ու տանը մարդ չի մնալու, անհրաժեշտ է լուծել տան պահպանության խնդիրը: Այդ հարցում կօգնի ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը: Դիմում ներկայացնելով եւ պայմանագիր կնքելով ՊՊԳ վարչության հետ՝ ձեր տանը կտեղադրվեն համապատասխան սարքավորումներ: Որեւէ կասկածելի շարժման դեպքում կգործի անվտանգության համակարգը, ազդանշան կստանան ոստիկանները եւ հինգ-յոթ րոպեի ընթացքում կլինեն ձեր հասցեում:

Եթե մեկնում եք արտերկիր, ուշադիր եղեք անձնագրում ելքի թույլտվության կնիքի առկայության, նաեւ՝ անձնագրի վավերականության ժամկետին:

Բնականաբար, ցանկացած վայր մեկնելիս վերցնում եք որոշ գումար: Անհրաժեշտ է փողը պահել էլեկտրոնային քարտի վրա, քանի որ կորցնելու դեպքում բանկի միջոցով կարող եք վերականգնել քարտը: Տարադրամի փոխանակում կատարեք միայն բանկերում կամ տարադրամի փոխանակման կետերում:

Անձնագիրը մի հանձնեք օտարի, իսկ եթե ինչ-ինչ հանգամանքներում կորցրել եք, պետք չէ խուճապի մատնվել. դիմեք տվյալ երկրում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ծառայություն, որտեղ կօգնեն ձեզ:

Մի քանի խորհուրդ հանգիստը լողափին անցկացնող քաղաքացիներին՝ ուշադիր եղեք ձեր իրերի նկատմամբ, դրանք թեկուզ կարճ ժամանակով մի թողեք առանց հսկողության: Լողափ գնալիս աշխատեք թանկարժեք իրեր չվերցնել ու չկրել: Լողալիս մի կրեք մատանիներ, քանի որ ջրում դրանք կարող են հեշտ եւ աննկատ դուրս գալ մատներից: Նույնը վերաբերում է ոսկե շղթաներին. կորցնելուց զատ դրանք կարող են կողոպտիչների համար հիանալի խայծ դառնալ: Լողափին քայլելիս ուշադիր եղեք. հաճախ հանգստացողները ավազների մեջ կոտրված շշեր կամ այլ սուր-ծակող իրեր են թողնում, նույնը վերաբերում է նաեւ ջրային հատվածին:

Եղեք ուշադիր, հետեւեք անվտանգության կանոններին, եւ ձեր ամառային հանգիստը կլինի անհոգ:

Հ. Պ.



«Արարատ-73»-ի ֆուտբոլիստ
Ճապոն. թատրոն
Դաժան կայսր
Տիրուհի
Գորկի, պիես
Գետ, Թաիլանդ
Մաքս ...
Գուցուլական պար
Կաթոդ
Ակունք
Ծառ
Սպասավոր
Բալթիկ
Մեղուներ
Երկաթուղու ծառայող
Ջրային կաթնասուն
Թռչուն
100 քմ
Հին գրելանյութ
Կլոդ ...
Ավատատեր, Մերձ. եւ Միջին Արեւելք
Լեռն. համակարգ, Փոքր Ասիա
Կաթողիկոսարան
Աչքի խաբկանք
Բրածո խեժ
Հանգույց
Բազե
Մանրապատում
Մարմնի օրգան
Իտալ. ֆուտ. ակումբ
Ամերիկ. կինոդերասան
Ալիք
Ոգելից խմիչք
Հնում՝ գիտուն մարդ, ուսուցիչ
Կարճ, լայնբերան հրազեն
Խեցեգործ. նուրբ արտադրանք
Քաղաք, Ճապոնիա
Քիմ. ռադիոակտիվ տարր
Ցովակալ ...
Բնապատկեր
Բժշկական հաստատութ.
Համատեղություն
Մաթեմատիկ. նշան
Արվեստ
Գամալ Աբդել ...
Ոչխարի ...
Արու բադ
Ասք, ավանդազրույց
Ֆրանս. նկարիչ
Խեղդող գազ
Գավառ, Պարսկահայք նահ.
Աֆրիկյան երկիր
Բնամարզ, Հար. Աֆրիկա
... Հովնաթան
Պայթուցիկ նյութ
Իտալ. փիլիսոփա, այրվեց խարույկի վրա
Պայմանական նշան
... Ուիլյամս (թեն.)
Քրիստոնեություն
Շտապ
Գյուղ, Գեղարքունիքի մարզ
Թռչնի մաշկի ծածկույթ
Սուրբ քաղաք
Մաճկալ
Կունգ-Ֆու
... Ախեջակովա
Ոչխարների ցեղ
«... ռոյս»
Սանձ
... Սկալա
Բուրգ, գլան
Տուրիստ. պիտույք
Խոտաբույս
«Ուտոպիա»
Ավստրալ. բնիկների զենք
Հայ գուսան
Ֆրանս. ոսկեդրամ
Ռոբին ...
Իտալ. նվագավար
«Աղամանդ որոնողները»
Քանակ
Քնարաձեւ եղջյուրներով կենդ.
Ժիլբեր ...
«Ռոլան ...»
... Կապուր
Հայոց այբուբենի տառ
Դժոխք
Դաշտավայր, ՀՀ
«... հրացանը»
Ապառաժ
Բաժին, հատված
Անկեղդան մարմին
Ժան ...
Բրանդո, Նիկոլսոն
Նավը Արարատի վրա
Սենդամբերք
Ձուկ
Զովացնող ըմպելիք

Ուշադրություն

Հարգելի քաղաքացիներ՝

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ապրագուշակ

26.07 - 01.08

Խոյ - Կարելի է քննարկել կարեւոր եւ բարդ հարցեր՝ չվախենալով, որ տարաձայնություններ կծագեն:

Ցուլ - Շատ բան սովորականից դժվար կտրվի: Դուք սուր եք արձագանքում մանր պատահարներին:

Երկվորյակ - Չմտածված որոշումները կարող են հանգեցնել դժվարությունների, որոնք մտերիմները կօգնեն հաղթահարել:

Խեցգետին - Հնարավոր են հաջող զուգադիպություններ, հետաքրքիր առաջարկներ:

Առյուծ - Դժվար է խուսափել վեճերից: Մի տրվեք սադրանքներին, եթե ինչ-որ մեկը կասկածում է ձեր ճշմարտացիության վրա:

Կույս - Կարող եք հաղթող դուրս գալ այնտեղ, որտեղ մյուսները պարտություն են կրել:

Կշեռք - Չեն բացառվում կոնֆլիկտներ մտերիմների հետ: Երբեմն վեճերը մանրուքների պատճառով են:

Կարիճ - Հնարավոր են հետաքրքիր առաջարկներ: Չեն բացառվում դրամական ձեռքբերումներ եւ հաջող գնումներ:

Աղեղնավոր - Շաբաթվա երկրորդ կեսին ինքնազգացողության վատթարացում: Մի պլանավորեք հոգնեցուցիչ գործեր, գործուղումներ, հանդիպումներ:

Այծեղջյուր - Չի բացառվում, որ ի հայտ գան նոր գաղափարներ, որոնք վերաբերում են աշխատանքին եւ բիզնեսին:

Ջրհոս - Կգտնեք մարդկանց, որոնց հետ կկարողանաք իրականացնել ձեր ծրագիրը: Հնարավոր են գործնական եւ ռոմանտիկ հարաբերություններ:

Ձուկ - Մանրուքների պատճառով զայրանում եք շրջապատի վրա: Կարեւոր է ամենամոտ մարդկանց աջակցությունը:

Փորձեք լուծել

Խնդիր N1



Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Խնդիր N2



Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1.g3-h4 a5:g3 2. h4:h4x

Խնդիր N2 1.c3-b4 a3:c5 2. g3-f4 e3:g5 3. h4:f6x

Պատրաստեց
Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ
Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

Նախորդ համարի սկանվորդի պատասխանները

«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 25.07.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: